

**ԱՐԾՎԻ Հ. ԲԱԽԶԻՆՅԱՆ**

*ԳԱԱ պատմության ինստիտուտ, ք.գ.թ.*

*artsvi@yahoo.com*

ID 0000-0001-8637-6946

DOI:10.59523/1829-4596.2025.1(30)-70

**ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՅԵՐԻ  
ՀԻՇԱՏԱԿՈՒՄՆԵՐԸ ԶՈՋԵՖ ՎՈԼՖԻ 1827-1828  
ԹԹ. ՈՒՂԵԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ\***

**Ամփոփում**

Հրեական ծագմամբ բրիտանացի միսիոներ Զոգեֆ Վոլֆը (1795–1862) 1820-ականների սկզբին ծեռնարկել է իր առաջին միսիոներական ուղևորությունը Մերձավոր Արևելքի տարբեր շրջաններ (Եգիպտոս, Սիրիա, Լիբանան, Երուսաղեմ, Պաղեստին, Վերին Միջագետք, Իրաք): Իր առաջին՝ «Հրեաների միսիոներ վարդապետ Զոգեֆ Վոլֆի միսիոներական օրագիրը» (հ. 1–3, 1827–1829) ուղեգրության մեջ, նա արձանագրել է իր հանդիպումները տարբեր ժողովուրդների ներկայացուցիչների, նաև՝ հայերի հետ: Լինելով միսիոներ՝ Վոլֆը մշտապես օթևանել է հայկական վանքերում, սերտ հարաբերություններ հաստատել հատկապես հոգևորականության հետ: Այս շփումների, ինչպես

---

\* Ներկայացվել է 31.III.2025 թ., գրախոսվել է 04.IV.2025 թ., ընդունվել է տպագրության 20.VI.2025 թ.:

նաև ընթերցումների շնորհիվ խորացել են նրա գիտելիքներն ու տեղեկությունները հայոց պատմության, եկեղեցու, գրականության և լեզվի վերաբերյալ: Վոլֆը հաճախ է հիշատակել իր քննարկումները հայ հոգևորականների հետ՝ կենտրոնանալով Ավետարանի գիտելիքների և հայ ժողովրդի մեջ քրիստոնեական գրագիտության տարածման կարևորության վրա: Նա բազմիցս արտահայտել է գաղափարներ՝ Լոնդոնում հայկական դպրոց և Հալեպում քրիստոնեական դպրոց հիմնելու վերաբերյալ՝ նպատակ ունենալով ոչ միայն տարածել աստվածաշնչյան գիտելիքներ, այլև ամրապնդել բրիտանական ազդեցությունը հայերի և տարածաշրջանի լայն շրջանակում:

Ջոզեֆ Վոլֆի առաջին ուղեգրությունն արժեքավոր պատմական աղբյուր է Միջագետքի և Մերձավոր Արևելքի հայության, ինչպես նաև XIX դ. առաջին կեսի հայկական կրոնական կենտրոնների վերաբերյալ: Այն պարունակում է նաև հիշատակումներ մի քանի հայ գործիչների և ժամանակի հայոց կյանքի երևույթների մասին:

***Քանալի բառեր***<sup>1</sup> Ջոզեֆ Վոլֆ, միսիոներ, ուղեգրություն, հայ համայնքներ, Մերձավոր Արևելք, Միջագետք, Լիբանան, Երուսաղեմ, կրոնական բանավեճեր:

## **Ներածություն**

Բրիտանացի միսիոներ Ջոզեֆ Վոլֆը թողել է ուղեգրական հարուստ ժառանգություն, որն առատ է Արևելյան և Արևմտյան Հայաստանի և տարբեր հայօջախների մասին արժեքավոր տեղեկություններով: Այդուհանդերձ, այդ գոր-

ծիչը և նրա եզակի սկզբնաղբյուրները մեծ մասամբ վրիպել են հայ ուսումնասիրողների ուշադրությունից<sup>1</sup>:

Ջոզեֆ Վոլֆը 24 տարեկանից աշխատել է Լոնդոնի Աստվածաշնչյան բրիտանական և օտարերկրյա ընկերությունում՝ հայտնի դառնալով որպես «հրեաների անգլիական միսիոներ»: Նա XIX դարում Բրիտանիայի թերևս ամենաշատ շրջագայած միսիոներն էր, որը ճանապարհորդել է Եվրոպայում, ԱՄՆ-ում, Աֆրիկայի հյուսիսում և, հատկապես, Ասիայում, հաճախ՝ մի քանի անգամ, ինչը բացառիկ էր տվյալ ժամանակաշրջանի ճանապարհորդների համար: Իր առաջին ուղևորությունն Ասիա նա սկսել է 1821-ին՝ մոտ հինգ տարի շրջելով Սինայի թերակղզում, Լևանտում, Միջագետքում, Պարսկաստանում, Վրաստանում և Ղրիմում:

Սույն հոդվածը վերաբերում է Վոլֆի՝ Արևելք կատարած առաջին՝ 1821–1822 թթ. միսիոներական ուղևորության արդյունքը հանդիսացող «Հրեաների միսիոներ վարդապետ Ջոզեֆ Վոլֆի միսիոներական օրագիրը» ուղեգրությանը (1827-ին լույս է տեսել առաջին հատորը՝ առանց «հ. 1» նշման, 1828–1829-ին՝ երկրորդ և երրորդ հատորները՝ «հ. 2» և «հ. 3» նշումներով)<sup>2</sup>: Մեր ուշադրության կենտրոնում Մերձավոր Արևելքի հայերի վերաբերյալ հիշատակություններն են, որոնք զետեղված են մասնավորապես առաջին երկու հատորներում: Հայերին վերաբերող հատվածներն ու հիշատակությունները տալիս ենք անգլերենից մեր կատարած թարգմանությամբ՝ անհրաժեշտության

---

<sup>1</sup> Բացառություն է մեր հրապարակումը՝ **Bakhchinyan**. 2024, 186-193:

<sup>2</sup> **Wolff**. 1827, 1828.

դեպքում կատարելով որոշ պարզաբանումներ:

### **Վոլֆի շփումները Երուսաղեմի հայերի հետ**

Վոլֆն առաջին անգամ հայերի հանդիպել է 1817-ին՝ Հռոմի Պրոպագանդայի դպրոցում ուսանելու տարիներին<sup>3</sup>: Իսկ քննվող ուղեգրության մեջ հայերի մասին նրա առաջին հիշատակությունը վերաբերում է 1821-ի սեպտեմբերին: Գտնվելով Ալեքսանդրիայում՝ նա հիշել է հայ Յուսուֆ Պողոսին, որը, ըստ նրա, երկրի իրական վարչապետը չէ, սակայն համարվում է Եգիպտոսի փաշայի վարչապետը<sup>4</sup>: Վոլֆը նկատի ունի Եգիպտոսի առևտրի և արտաքին գործերի նախարար Պողոս բեյ Յուսուֆյանին (1775–1844), որը եղել է փոխարքա Մուհամմադ Ալի փաշայի քարտուղարը: Մեկ ամիս անց Երուսաղեմում Վոլֆը վեց հայերի ընկերակցությամբ ճաշել է փաշայի առաջին թարգմանիչ Ռեյս-դենի հետ<sup>5</sup>: Նա նշել է, որ նպատակ ունի կարդալ նաև «Հայաստանի Օգոստինոս» սուրբ Ներսեսի գրությունները<sup>6</sup>: Կարծում ենք, որ Վոլֆը Ներսես Շնորհալու և քրիստոնեական սուրբ Օգոստինոս Երանելիի (354–430) միջև նմանություն տեսել է՝ նկատի ունենալով նրանց կողմից Աստծո հետ կենդանի հարաբերություններ հաստատելու և Տիրոջը հասարակ մարդկանց ներկայացնելու ջանքերը: Առհասարակ, Ներսես Շնորհալին, որն այդ ժամանակ արդեն հրատարակվել էր եվրոպական լեզուներով (1823-ին

---

<sup>3</sup> Wolff. 1860, 93–94.

<sup>4</sup> Wolff. 1827, 117.

<sup>5</sup> Wolff. 1827, 164.

<sup>6</sup> Wolff. 1827, 194.

Վենետիկի Մխիթարյանները «Հաւատով խոստովանիմ» աղոթքը լույս էին ընծայել 24 լեզվով), հաճախ է հիշվում Վոլֆի այս և հետագա ուղեգրություններում:

1822-ի հունվարի 28-ին Վոլֆը Ղազիրից (այժմ՝ Լիբանանում) մարոնիտների քոլեջ գնալու ճանապարհին երեք ժամ կանգ է առել կաթոլիկ հայկական մենաստանում: Նա նշել է, որ «շատ հյուրասեր և բարի» հայ կրոնավորները ցանկություն են հայտնել դպրոց բանալ Անգլիայում: Ինքը՝ Վոլֆը, իրազեկ է եղել դավանաբանական բաժանումներին ոչ միայն հռոմեադավան ու միաբնակ, այլև կաթոլիկ հայերի մեջ: Նա մասնավորապես նշել է, որ «Հռոմի Պրոպագանդայի հայ անդամները հետապնդում են մոլեռանդ, առաքինի և ազնվաբարո հայերին, որոնք կոչվում են Մխիթարյաններ Վենետիկում.... նրանք հալածում են նրանց որպես հերետիկոսների, որպես Քրիստոսի թշնամիների, որ պաշտպանում են Աստծո խոսքը, Քրիստոսի խոսքը մեծ մոլեռանդությամբ: Մխիթարյանները տպագրատուն են հիմնել Վենետիկում և արդեն հրատարակել են ոչ միայն հոգևոր թեմաներով բազմահազար գրքեր, այլև Աստծո խոսքն ինքնին»<sup>7</sup>: Այնուհետև շարունակել է. «Ես կրկին կանչեցի հայր Վարդապետին, հայկական վանքի մեծավորին ու նորից խոսեցի Վենետիկի իրենց եղբայրների ու Հայաստանի այլ քրիստոնյաների հետ իրենց հաշտվելու կարևորության մասին: ...Նրանք ինձ ընթերցելու տվեցին 12-րդ դարի հայոց պատրիարք սուրբ Ներսես Կլայեցու

---

<sup>7</sup> Wolff. 1827, 164. 238-239.

(Ներսես Շնորհալու – Ա. Բ.) աղոթքը»<sup>8</sup>, որին հետևում է Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքի անգլերեն շարադրանքը<sup>9</sup>: Թեև նշված չէ, սակայն աղոթքը վերցված է Մխիթարյանների 1824 թ. 24-լեզվյա հրատարակությունից: Դրանից հետո նրան կարդալ են տվել Ներսես Լամբրոնացու ճառը<sup>10</sup>, և Վոլֆը հարկ է համարել բացատրել, որ «Վերոհիշյալ Ներսես Լամբրոնացին որդին էր Սեբաստիայի իշխան Օշին Հայի. նա ստեղծել էր Տարսոնի և Լամբրոնի արքեպիսկոպոսությունը Գրիգոր Դ պատրիարքի օրոք»<sup>11</sup>: Այսպիսով, աստիճանաբար սկսվել է Ջոզեֆ Վոլֆի ծանոթությունը նաև Արևմուտքում տակավին գրեթե անհայտ հայ գրականության (թեկուզև՝ կրոնական) հետ:

Մարտի 10-ին Վոլֆին «սիրալիր» ընդունելության է արժանացրել Երուսաղեմի հայոց պատրիարքը, որին էլ միսիոները տվել է Պողոս Յուսուֆյանի նամակը: Պատրիարքը և մյուս հայերը նրան օթևան են առաջարկել վանքում, որը նա ընդունել է «առանց դույզն-ինչ երկմտանքի»<sup>12</sup>: Այստեղ նա հանդիպել է հայր Պաուլ Թութունջիին (Պողոս Թութունջյան), որը, ըստ նրա, «ազնվաբարո մարդ է և նշանակալի տաղանդի տեր.... նա, ավա՛ղ, Փարիզում ծանոթացել է Ժան Ժաք Բուսոյի և Վոլտերի գրվածքներին,

---

<sup>8</sup> Wolff. 1827, 164. 240.

<sup>9</sup> Wolff. 1827, 164. 240-242.

<sup>10</sup> Wolff. 1827, 164. 242.

<sup>11</sup> Wolff. 1827, 164. 242.

<sup>12</sup> Wolff. 1827, 164, 251-252.

որոնք նրան լրիվ թերահավատ են դարձրել»<sup>13</sup>: Բնական է կրոնավորի ժխտական վերաբերմունքն աթեիստական հայացքների տեր Ռուսոյի և Վոլտերի հանդեպ: Պառլո Թութունջին ևս Վոլֆի հետ խոսել է իր ազգի հոգևոր կարիքներից՝ հայտնելով, որ անգլիացի ազգը մեծ օրհնություն կլինի հայերի համար, եթե Կ.Պոլսում հիմնեն հայկական քոլեջ ու եկեղեցի և այնտեղ ուղարկեն ճշմարիտ Ավետարանը քարոզող մեկի<sup>14</sup>:

Մարտի 14-ին Վոլֆն այցելել է Աքշեհիրի Հակոբ արքեպիսկոպոսին, որը նաև եղել է Երուսաղեմի Գաբրիել պատրիարքի ընդհանուր փոխանորդը<sup>15</sup>: Ավելի ուշ՝ մարտի 24-ի գրառման մեջ այս արքեպիսկոպոսի անունը նա հիշել է որպես Հակոբ Մինասիա (թերևս՝ Մինասյան): Նրանք զրուցել են Բրիտանական և Օտարերկրյա Աստվածաշնչյան միության կողմից Սուրբ Գիրքը խոսակցական հայերեն և հայատառ թուրքերեն հրատարակելու անհրաժեշտության մասին<sup>16</sup>: Նույն օրվա գրառման մեջ նա հիշել է, որ հանդիպել է տարեց հայ Սթիվեն Քաչոյին (հավանաբար՝ Ստեփան Խաչո) Կալկաթայից, որը վկայել է, որ Հնդկաստանի միսիոներներն ապրում են սրբակենցաղ կյանքով, մինչ այլ անգլիացիներ ապրում են աշխարհիկ կյանքով<sup>17</sup>:

Երուսաղեմում Վոլֆը պարբերաբար այցելել է հայոց

---

<sup>13</sup> Wolff. 1827, 254.

<sup>14</sup> Wolff. 1827, 281.

<sup>15</sup> Wolff. 1822, 123.

<sup>16</sup> Wolff. 1827, 258-259.

<sup>17</sup> Wolff. 1827, 259.

պատրիարքին, իսկ բազմաթիվ տեղացի հայեր, իր կացարանում թե փողոցում, նրանից խնդրել են քրիստոնեության վերաբերյալ հայերեն ու հայատառ թուրքերեն գրքույկներ և Սուրբ Գրքեր<sup>18</sup>: Այցելել է նաև Բեթղեհեմի հայոց վանք, իսկ լինելով Նազարեթում՝ նշել է, որ այնտեղ հրեաներ չկան, այլ մոտ 1000 կաթոլիկներ, 400 հույներ և քչաթիվ հայեր՝ առանց որոշակիացնելու քանակը<sup>19</sup>: Նա շարունակել է քրիստոնեական գրագիտություն տարածել մարդկանց մեջ ու հայտնել է հայոց մասին հետևյալ վկայությունը. «Մի սնահավատ սովորություն կա հայերի մեջ, որը դեմ է Ղևտական ԺԹ «Չպիտի մարմինդ կտրես»-ին<sup>20</sup>. նրանք խաչի և Մարիամ կույսի պատկերով կտրվածք են անում իրենց մարմնի վրա: Էջմիածնի պատրիարքը զուր տեղն է իր հավանությունը տվել այդ առթիվ: Հնարավորությունն օգտագործելով՝ ես այդ մասին խոսեցի հայերի հետ: Նրանք այնքան տպավորված էին իմ հայտնած ճշմարտությունից, որ նրանցից ոմանք ինձ խնդրեցին տալ բժշկական միջոցներ՝ ջնջելու համար այդ սնահավատական գործը»<sup>21</sup>: Իրականում այստեղ նա «կտրվածքներ» ասելով նկատի ունի դաջվածքները (դա է հուշում հիշատակությունը խաչի և Մարիամ կույսի պատկերների և ապա՝ դրանք ջնջելու մասին), որը կապ չունի որոշ մարդկանց կողմից զգացմունքային ճնշվածությունից ազատվե-

<sup>18</sup> Wolff. 1827, 320.

<sup>19</sup> Wolff. 1828, 150.

<sup>20</sup>Բառացի՝ «Մահացած հոգու համար ձեր մարմնի վրա կտրվածքներ չանեք և ձեզ վրա դաջվածքներ չանեք» (Ղևտական, ԺԹ:28):

<sup>21</sup> Wolff. 1827, 305.

լու նպատակով մաշկի վրա կտրվածքներ անելու սովորույթի հետ:

### **Վոլֆը Լիբանանի և Միջագետքի հայերի մասին**

Վոլֆի առաջին ուղեգրության երկրորդ հատորը շարունակում է 1823-1824 թթ. հեղինակի՝ Պաղեստին և Սիրիա կատարած ուղևորության նկարագրությունը:

1823-ի սեպտեմբերին Վոլֆն այցելել է «կաթոլիկ հայոց պատրիարքի նստավայրը»՝ Բիզմարի (Զմմառ) միաբանություն, որը նա անվանել է «հիանալի» և շարունակել. «Մեզ այնտեղ շատ քաղաքավարի ընդունեց հայոց պատրիարքը: Նրա անունը Գրիգոր է: Մենք այնտեղ հանդիպեցինք մի հայ եպիսկոպոսի, որին ես ճանաչում էի Հալեպից: Զմմառը եկեղեցական ճեմարան է: Այդ քոլեջում կան քսան երիտասարդներ, որոնք ուսումնասիրում են քերականություն, բանաստեղծություն, հոետորաբանություն, փիլիսոփայություն և աստվածաբանություն: Նրանք իրենց ուսումը ստանում են հայերեն: Մենք երկար քննարկում ունեցանք եպիսկոպոսների հետ: Գաբրիել արքեպիսկոպոսը և Հալեպի հայ եպիսկոպոսները և մի երիտասարդ քահանա, որը խոսում է իտալերեն, առանձին-առանձին գնեցին տասը օրինակ Սուրբ գիրք, բայց աղաչեցին մեզ այդ մասին չպատմել պատրիարքին կամ միաբանությունից որևէ մեկի»<sup>22</sup>: Վերջին վկայությունը ցույց է տալիս օտարագրի միսիոներների և նրանց միջոցով տարածվող թեկուզև կրոնական գրականության հանդեպ հայ եկեղեցու ունե-

---

<sup>22</sup> Wolff. 1828, 173-174.

ցած անհանդուրժողականությունը:

Դամասկոսի բնակիչների մեջ Վոլֆը հիշել է 200,000 մուսուլման, 4000 ռաբինական և երեք կարաիտ հրեա ընտանիք, 12000 հույն, կաթոլիկ<sup>23</sup>, ասորի ու հայ քրիստոնյաներ<sup>24</sup>: Նույն քաղաքում նա այցելել է Հռոմի Պրոպագանդայի վանք, որի դպրոցի 160 աշակերտների մեջ եղել են ոչ միայն կաթոլիկներ, այլև հույներ, հայեր և փոքրաթիվ հրեաներ<sup>25</sup>:

Դամասկոսից հետո Վոլֆը մեկնել է Հալեպ: Այնտեղից գրած մի նամակում վկայել է, որ այդ քաղաքը «բնակեցված է թուրքերով..., ասորիներով, հայերով, քաղղեացիներով և հույն քրիստոնյաներով ու հրեաներով. բոլոր այս ժողովուրդներն ապրում են մեծ տգիտության մեջ և, հետևաբար, հատկապես այս քրիստոնյա հարանվանությունների մեջ այդ պապականներն ունեն ազատ մուտք, և նրանց աշխատանքը ոչ թե հանուն Աստծո արքայության առաջխաղացման է, այլ հանուն Պապի վարդապետությունների»<sup>26</sup>: Եղել է նաև Եփրատի ափին գտնվող Բիր (այժմ՝ Բիրեջիկ, Թուրքիա) քաղաքում, վկայել, որ նրա 1500 թուրք բնակիչներն ապստամբել են սուլթանի դեմ և 25 տարի է հարկ չեն վճարում և որ այնտեղ կան «նաև 25 հայ քրիստոնյաներ երեք քահանաներով, որոնք ապրում են մեծ տգիտության

---

<sup>23</sup> Այստեղ և հետագայում «կաթոլիկ» ասելով Վոլֆը նկատի ունի բոլոր հռոմեադավան արևելացիներին:

<sup>24</sup> **Wolff.** 1828, 184.

<sup>25</sup> **Wolff.** 1828, 204.

<sup>26</sup> **Wolff.** 1828, 220.

մեջ»<sup>27</sup>, իսկ հայերի եկեղեցին գտնվում է մի քարանձավի մեջ<sup>28</sup>: Այս և նախորդ մեջբերման մեջ հիշված տգիտությունը պետք է հասկանալ քրիստոնեական գրագիտության բացակայության առումով:

Շարունակելով իր ուղին դեպի Ուրֆա՝ Վոլֆն այցելել է տեղի հայ եպիսկոպոսին և վկայել, որ քաղաքում ապրում է 200 ասորի և 2000 հայ ընտանիք՝ երկու մեծ ու հնագույն եկեղեցիներով<sup>29</sup>:

Վոլֆի հաջորդ հայկական գրառումը վերաբերում է Ուրֆայից 10 կմ հեռավորությամբ գտնվող Կերմուշ (Կարմուշ) գյուղին: «Փետրվարի 14-ին, - գրում է նա, - հասանք Կերմուշ կոչվող գյուղ, որն ամբողջությամբ բնակեցված է հայ քրիստոնյաներով, որոնք ունեն մեկ եկեղեցի և երկու քահանա: Նրանք ինձ կանչեցին և իմանալով իմ ճամփորդությունների նպատակը՝ ցանկացան հայերեն Աստվածաշունչներ ունենալ: Մենք այնտեղ շատ հյուրընկալ վերաբերմունքի արժանացանք մի հայ քրիստոնյայի տանը»<sup>30</sup>:

Վերին (Հայոց) Միջագետքի հին բերդաքաղաքներից

---

<sup>27</sup> **Wolff.** 1828, 232.

<sup>28</sup> **Wolff.** 1828, 232-233.

<sup>29</sup> **Wolff.** 1828, 235.

<sup>30</sup> **Wolff.** 1828, 240. Կերմուշում մինչև 1915-ը բնակվել է շուրջ 1000 հայ: Դրանից հետո այդ հայաթափված գյուղում եկեղեցին որպես ախոռ է գործածվել, մինչև որ 2013-ին առաջին անգամ կրոնական արարողություն է տեղի ունեցել: Սակայն 2014-ին Ստամբուլի «Ակոս» պարբերականն ահազանգել է եկեղեցու քանդման մասին (տե՛ս Թուրքիայում շարունակվում է Կերմուշի հայկական եկեղեցու ավերումը, <https://www.tert.am/am/news/2014/05/16/kermush-church/-1088250> մուտք՝ 9.04.2024):

Մերդին ժամանած Վոլֆը գրել է, որ, այնտեղ օրենքի համաձայն, կաթոլիկ հայերը, քաղդեացի կաթոլիկները, ասորիները և ասորի կաթոլիկները պետք է միասին պահեն մեծ Պահքը, որը սկսվում է Զատիկից 50 օր առաջ, սակայն այդ տարի հայ կաթոլիկները ձևացրել են, թե նամակներ են ստացել Կոստանդնուպոլսի հայ և հույն պատրիարքներից, ըստ որոնց այս տարի պահքի օրերն սկսվում են մարտի 20-ին<sup>31</sup>: Մերդինի հայ կաթոլիկների թիվը Վոլֆը հաշվել է 200 ընտանիք՝ մեկական եկեղեցիով և դպրոցով: «Նրանք ունեն,– գրել է նա, – արքեպիսկոպոս և եպիսկոպոս, որոնք ամբողջովին կախված են Հռոմի Պրոպագանդայից, բայց ժամանակավոր հարցերում կախված են Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքից: Իփսումարի (Զմմառ – Ա. Բ.) հայ կաթոլիկ պատրիարքն իրավասություն չունի Միջագետքի հայ կաթոլիկների նկատմամբ: ....Այսօր երեկոյան, – շարունակել է նա,– այցելեցի Էլիաս Շադիին, որի մոտ հանդիպեցի երկու հայ կաթոլիկ եպիսկոպոսների, երկուսն էլ՝ Հռոմի Պրոպագանդայի աշակերտների: Արքեպիսկոպոսի անունը Յոակիմ Թասպաս<sup>32</sup> է, և նա յոթանասուն տարեկան է»<sup>33</sup>: Թասպաս արքեպիսկոպոսը Վոլֆին խնդրել է ձեռք բերել «որոշակի քանակությամբ» լանքասթերյան համակարգի արաբերեն, թուրքերեն, հայերեն և պարսկերեն օրինակներ<sup>34</sup>: Ուշագրավ է,

---

<sup>31</sup> Wolff. 1828, 250.

<sup>32</sup>Հովակիմ Թասպասյան (1753–1830), 1788-ից Մարդինի արքեպիսկոպոս:

<sup>33</sup> Wolff. 1828, 251-252.

<sup>34</sup> Wolff. 1828, 260-261.

որ Օսմանյան կայսրության գավառում բնակվող հայ հոգևորականը հետաքրքրվել է տվյալ ժամանակաշրջանում եվրոպական տարրական դպրոցներում տարածում գտած ուսուցման մեթոդների և կազմակերպման մի համակարգով, որը հայտնի էր իբրև փոխադարձ ուսուցման կամ Բել-Լանքասթերի համակարգ<sup>35</sup>:

Մերոդինից Վոլֆը շարունակել է իր ճանապարհը դեպի հարավ՝ նշելով, որ «Բիրից մինչև Մուսուլ ասորիներն ամբողջ երկիրը համարում են Սիրիայի երկիր: Հայերն այն անվանում են Փոքր Հայք»<sup>36</sup>: Բաղդադ մեկնելու ճանապարհին նա հայերի է հանդիպել Ամուդա քաղաքում (այժմ՝ Հասաքայի նահանգում, Թուրքիայի սահմանին մոտ), որոնց առանց մանրամասնելու բնութագրել է որպես «ոչ քաղաքակիրթ»<sup>37</sup>:

Ժամանելով Բաղդադ՝ Ջոզեֆ Վոլֆը ջերմ հյուրընկալության է արժանացել տեղացի հայ Սարգիս աղայի տանը, որին նա հիշել է որպես «Բաղդադում բրիտանական գործակալ»<sup>38</sup>: Ըստ Վոլֆի՝ «Բաղդադում ընդհանուր առմամբ կա մոտ 500 քրիստոնյա տուն՝ հայեր, հայ կաթոլիկներ,

---

<sup>35</sup> Փոխադարձ ուսուցման մեթոդն իրարից անկախ մշակել են անգլիացի մանկավարժներ Էնդրյու Բելը և Ջոզեֆ Լանքասթերը: Ըստ այս համակարգի՝ ավագ և առավել առաջավոր աշակերտներն ուսուցիչների ղեկավարությամբ պարապմունքներ են անցկացնում մյուսների հետ: Փոխադարձ ուսուցումը կիրառվել է Հնդկաստանում, ապա, XIX դ. սկզբին, լայն տարածում ստացել մի շարք երկրներում (ԱՄՆ, Ֆրանսիա, Բելգիա, Ռուսաստան և այլն):

<sup>36</sup> **Wolff.** 1828, 262.

<sup>37</sup> **Wolff.** 1828, 271.

<sup>38</sup> **Wolff.** 1828, 288.

ասորիներ, ասորի կաթոլիկներ և քաղդեացի կաթոլիկներ»<sup>39</sup>:

Գրելով Դամասկոսի «Տեռա Սանտա» (Սուրբ երկիր) կաթոլիկ միաբանության մասին՝ Վոլֆը նշել է, որ նրա վանականներն ունեն դպրոցական մի հաստատություն, որտեղ դասավանդում են անվճար, և այդ դպրոց հաճախում են ոչ միայն կաթոլիկները, այլև հույներ, ասորիներ, հայեր և որոշ մոլեռանդ հրեաներ<sup>40</sup>: Իսկ Բասրայում, ըստ նրա, «կա հայ քրիստոնյաների 25 ընտանիք, որոնք Պարսկաստանից են: Խոսում են և՛ հայերեն, և՛ պարսկերեն, իսկ մի քանիսը՝ անգլերեն, որոնք անուղղակիորեն գտնվում են բրիտանական ենթակայության ներքո: Նրանք ունեն մեկ եկեղեցի և մեկ քահանա: Հիմա այստեղ է Հայաստանի Վան լճի՝ ամբողջությամբ հայաբնակ Սիմ (Լիմ – Ա. Բ.) կղզու հայ եպիսկոպոս Սիմոն Վասթոնը: Նա բանիմաց մարդ է»<sup>41</sup>: Հետագա գրառման մեջ Վոլֆը 17 կետով 11 էջով ներկայացրել է Բասրայում հայ եպիսկոպոսի հետ իր հարց ու պատասխանը հայ ժողովրդի և մասնավորապես՝ հայ եկեղեցու մասին<sup>42</sup>: Հետագա շարադրանքում հայությանն այդքան մանրամասն ներկայացնելը նա բացատրել է այսպես. «Հայերը, ինչպես կերևա իմ օրագրի երկրորդ մասում, շատ տրամադիր են հրահանգներ ստանալու, հետևաբար ես մտածեցի մանրամասն պատմել նրանց մասին, և իմ փոքր կարողությամբ նպաստել այդ ազգի մասին

---

<sup>39</sup> Wolff. 1828, 289.

<sup>40</sup> Wolff. 1828, 297.

<sup>41</sup> Wolff. 1828, 308-309.

<sup>42</sup> Wolff. 1828, 346-357.

ավելի ճշգրիտ իմացությանը»<sup>43</sup>:

### **Եզրակացություններ**

«Հրեաների միսիոներ վարդապետ Ջոզեֆ Վոլֆի միսիոներական օրագիրը» ցարդ հայագիտությանն անձանոթ մնացած, սակայն արժեքավոր սկզբնաղբյուր է XIX դ. առաջին կեսի Մերձավոր Արևելքի (Երուսաղեմ, Սիրիա, Լիբանան, Վերին Միջագետք, Իրաք) հայ բնակչության, մասնավորապես՝ հայ կրոնական կենտրոնների վերաբերյալ: Իր շարադրանքում նա երբեմն մատնանշել է այս կամ այն բնակավայրի հայության թիվը (ըստ անձանց կամ ընտանիքների), ինչը լրացուցիչ վկայություններ է տրամադրում տվյալ ժամանակաշրջանում տարածաշրջանի հայության ժողովրդագրական պատկերը վերականգնելու համար: Հանրահայտ փաստերի հետ մեկտեղ Վոլֆը վկայություններ է թողել որոշ փոքր բնակավայրերի հայերի (Բիր, Ամուդա, Կերմուշ) մասին, ինչպես նաև հիշատակել ժամանակի մի քանի ականավոր հայ գործիչների (հիմնականում՝ կրոնավորների): Արժեքավոր են նաև հեղինակի վկայությունները Մերձավոր Արևելքի հայության միջդավանաբանական առնչությունների և հայերի մեջ աստվածաշնչյան գրագիտության հանդեպ ունեցած ձգտումների վերաբերյալ:

---

<sup>43</sup> Wolff. 1828, 358.

## Գրականություն/References/Литература

1. **Bakhchinyan A.** 2024, Joseph Wolff's Letter on Establishing an Armenian School in London, "International Review of Armenian Studies", № 3 (36), pp. 186-193.
2. **Wolff** 1822, Mission to Jerusalem. From the London Jewish expositor of September, 1822. Extracts from the Journal of Mr. Wolff. "The Washington Theological Repertory and Churchman's Guide", № 1, vol. IV, August.
3. **Wolff** 1827, Memoir of the Rev. Joseph Wolff Missionary to the Jews: Comprising his first visit to Palestine in the years 1821 & 1822, Written by Himself. Edited and revised by John Bayford, Esq., F.S.A., second edition, London, published by James Duncan, Paternoster Row, and L. B. Seeley & Son, Fleet Street, 365 p.
4. **Wolff** 1828, Memoir of the Rev. Joseph Wolff Missionary to the Jews. Vol. II. Comprising his second visit to Palestine in the years 1823 & 1824. Published by James Duncan, Paternoster Row; L. B. Seeley & Son, and Burnside, Fleet Street, 392 p.
5. **Wolff** 1860, Travels and Adventures of the Rev. Joseph Wolff, D.D., LL.D: Late Missionary to the Jews and Muhammadans in Persia, Bokhara, Cashmeer, etc., London, Saunders, Otley and Co, vol. I, 538 p.

**Арцви Г. Бахчинян, *Институт истории НАН, к.ф.н.*,  
Свидетельства об армянах Ближнего Востока в путевых  
записках Джозефа Вольфа (1827-1828 гг.)**

**Резюме**

Британский миссионер еврейского происхождения Джозеф Вольф (1795-1862) предпринял свою первую миссионерскую поездку по различным регионам Ближнего Востока в начале 1820-х годов. В своем травелогe «Мемуары реверенда Джозефа Вольфа, миссионера среди евреев» (т. 1–3, 1827–1829) он описал свое общение с различными народами региона, в том числе с армянами.

Этот до сих пор остававшийся неизвестным арменоведам ценный источник содержит сведения об армянском населении Ближнего Востока в первой половине XIX века (Иерусалим, Сирия, Ливан, Верхняя Месопотамия, Ирак) и, в частности, об армянских религиозных центрах. В редких случаях он указывает численность армян того или иного населённого пункта (количество лиц или семей), что предоставляет дополнительные свидетельства для восстановления демографической картины армян региона в тот период.

Наряду с общеизвестными фактами Джозеф Вольф оставил свидетельства о некоторых небольших армянских поселениях (Бир, Амуда, Кермуш), а также упомянул нескольких выдающихся армянских деятелей своего времени (в основном – представителей духовенства). Ценными являются также его наблюдения об интерконфессиональных отношениях среди армян

Ближнего Востока и их стремлении к библейской грамотности.

**Ключевые слова:** Джозеф Вольф, миссионер, путевые заметки, армянские общины, Ближний Восток, Месопотамия, Ливан, Иерусалим, религиозные дебаты.

**Artsvi H. Bakhchinyan, *Institute of History of National Academy of Sciences of Republic of Armenia, PhD in Philology, Accounts of Armenians in the Near East in Joseph Wolff's 1827-1828 Travelogue***

### Summary

The British missionary of Jewish origin, Joseph Wolff (1795-1862), undertook his first missionary journey across various regions of the Near East in the early 1820s. In his travelogue *Memoir of the Rev. Joseph Wolff, Missionary to the Jews* (vols. 1-3, 1827-1829), he described his interactions with different peoples of the region, including Armenians.

This valuable source, which has so far remained unknown to Armenian scholars, contains information about the Armenian population of the Near East (Jerusalem, Syria, Lebanon, Upper Mesopotamia, Iraq) in the first half of the 19<sup>th</sup> century and, in particular, about Armenian religious centers. In rare cases, he provides data on the number of Armenians in specific settlements (counting individuals or families), offering additional evidence for reconstructing the demographic landscape of Armenians in the region during that period.

In addition to well-known facts, Joseph Wolff recorded

information about several small Armenian settlements (Bir, Amuda, Kermush) and mentioned a number of prominent Armenian figures of his time, mainly members of the clergy. His observations of interdenominational relations among Middle Eastern Armenians and their aspirations for biblical literacy are also of great value.

***Key words:*** Joseph Wolff, missionary, travelogue, Armenian communities, Near East, Mesopotamia, Lebanon, Jerusalem, religious debates.